Հայաստանը ՄԳՏԿ անդամ

1994 թվականի սեպտեմբերի 14-ի Հայաստանի Հանրապետության կառավարության թիվ 420 որոշման համաձայն Հայաստանի Հանրապետությունը միացել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ՄԳՏԿ, Международный научно-технический центр, МНТЦ) հիմնադրման մասին համաձայնագրին:

1997 թվականի նոյեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի N 211-1 որոշմամբ վավերացվել է Հայաստանի Հանրապետության միացումը ՄԳՏԿ հիմնադրման մասին համաձայնագրին:

Հայաստանի Հանրապետությունից ՄԳՏԿ կոորդինացիոն կոմիտեի անդամներն են ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից Ալպիկ Մկրտչյանը:

ՄԳՏԿ-ի հայկական տարածաշրջանային բաժանմունքի ղեկավարն է Համլետ Նավասարդյանը:

1994 թ.-ից սկսած, երբ Հայաստանի Հանրապետությունը միացավ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հիմնադրման մասին համաձայնագրին, Հայաստանի 75 գիտահետազոտական կազմակերպություններից ՄԳՏԿ-ի ֆինանսավորմանն է ներկայացվել ավելի քան 400 նախագիծ, որոնցից 154-ը ֆինանսավորում է ստացել 36.5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով: